ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԹԻՎ 93-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

Որոշման նախագիծը մշակվել է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-34-րդ հոդվածների համաձայն: Նախագիծը մշակելիս հաշվի է առնվել այն, որ Չարենցավան համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատվել է 2021 թվականի դեկտեմբերի 20-ին և չի արտացոլվել 2022 թվականի տարեսկզբի պարտքերը և բյուջեի վարչական ու ֆոնդային մասերի ազատ մնացորդները և բյուջեի մնացորդների մասին Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի կողմից տրված տեղեկանքը:

Համայնքի վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը կազմել է 96502.162 հազար դրամ, իսկ ֆոնդային մասի տարեսկզբի մնացորդը՝ 9241.568 հազար դրամ: Վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդի մի մասը կուղղվի տարեսկզբի պարտավորությունների մարմանը, իսկ 95000.0 հազար դրամը կտեղափոխվի ֆոնդային բյուջե և ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդի հետ միասին ֆոնդային բյուջեի պահուստային ֆոնդ կապիտալ ծրագրերի իրականացման համար:

Քանի որ բյուջեն կրում է նորմատիվ բնույթ, ուստի նրա մեջ կատարվող փոփոխության նախագիծը ևս կրում է նորմատիվ բնույթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ